

**ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՍՐՈՒՄ  
ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ  
ՆԱԽՕՐՅԱԿԻՆ ԵՎ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ  
ՄԻՔԱՅԵԼ ՄԻՆԱՍՅԱՆ**

**1. Կաթողիկոս Գևորգ 5-րդը և  
Հայկական հարցի բարձրացումը**

1912թ. ամռանը սրվեց Թուրքիայի ներքին և արտաքին քաղաքական իրավիճակը: Թրքացման քաղաքականությունը փաստորեն հակասության մեջ էր մտել ազգային փոքրամասնությունների շահերի հետ: 1910թ. օգոստոսին Թալեաթ փաշան թուրքական «Միություն և առաջադիմություն» կուսակցության Կենտրոնական կոմիտեի միատուր առաջ քաշեց բոլոր անհնազանդ ազգությունների ոչնչացման խնդիրը. «Մենք անհաջող փորձեր կատարեցինք, որպեսզի անհավատներին դարձնենք օրինապահ օսմանցիները»<sup>1</sup>, - հայտարարեց նա: Կտրուկ սրվեց հայ ազգարնակչության վիճակը: 1912թ. հուլիս-սեպտեմբերին Կոստանդնուպոլսի պատրիարքարան հասան երիտթուրքերի ահաբեկչությունների մասին Ախթամարի պատրիարքության առաջնորդական տեղապահի, վանի թեմական առաջնորդի և Մուշի թեմի հեռագրերը:<sup>2</sup>

1912թ. սեպտեմբերի 4-ին Կոստանդնուպոլսի պատրիարք Հ. Արշարունին կաթողիկոս Գևորգ 5-րդին գրավոր տեղեկացրեց հայկական զավառների ազգարնակչության հանդեպ բռնարարքների և դրանց բռնություններից զերծ պահելու անհրաժեշտության մասին: Մասնավորապես, նշվում էր պետական քաղաքականության մակարդակով՝ բռնությունների գիտակցված բնույթը: Հաշվի առնելով «պաշտոնական բանակցություններ վարելու» Գևորգ 5-րդի հնարավորությունները, ազգի հայրապետից սպասվում էր ստեղծված իրավիճակից դուրս գալու «խորհուրդ»:<sup>3</sup>

Իր հերթին Թուրքիայի հայերի նկատմամբ հերթական վայրագությունների մասին տեղեկությունները, Թիֆլիսի համայնքի ներկայացուցիչներին դրդեցին 1912թ. սեպտեմբերի 19-ին որոշում կայացնել՝ հայրենակիցներին փրկելու քայլեր ձեռնարկելու մտադրությամբ եկեղեցու առաջնորդի մտուղարկել երզվյալ հավատարմատար Ս. Հարությունյանին և «Մշակ» թերթի խմբագիր Հ. Առաքելյանին: Այդպիսի քայլեր էին դիտվում մեծ տերությունների խնամակալության ներքո Տաճկահայաստանի ինքնավարության կարգավիճակի ձեռք-

բերումը, ինքնապաշտպանության նպատակով հայ ազգաբնակչությանը գեներ տալը: Առաջատար երկրների կողմից ինքնավարության զարգացումը պաշտպանելու համար նախատեսվում էր ակտիվ քարոզչություն ծավալել արտասահմանում: Հայկական հարցի լուծման խնդրում երիտ-թուրքերի վարչակարգի վրա ազդելու արդյունավետ միջոց էին դիտվում ցույցերն ու բողոքները:<sup>4</sup> Կաթողիկոսին նման խնդրանքով դիմեցին նաև երևանյան հասարակայնության ներկայացուցիչները:<sup>5</sup> Այդ դիմումները Գևորգ 5-րդին դրդեցին միջոցներ ձեռնարկել Թուրքիայի հուտի վիճակի բարելավման ուղղությամբ: Սկզբում Ամենայն Հայոց կաթողիկոսը մտադրվել էր անձնական խնդրագրով Սանկտ Պետերբուրգում ներկայանալ Նիկոլայ 2-րդին: Հարցը քննության առթվեց Կովկասի փոխարքա Վորոնցով-Գաշկովի հետ, որը նպատակահարմար համարեց սահմանափակվել միայն միջնորդագրի հանձնումով:<sup>6</sup> 1912թ. հոկտեմբերի 2-ին Գևորգ 5-րդը նամակ հղեց ցարին: Ուր նկարագրվում էր Թուրքիայի հայ ազգաբնակչության ծանրագույն վիճակը և խնդրվում էր հովանավորություն ցուցաբերել Տաճկահայաստանի հայ ազգաբնակչության նկատմամբ:<sup>7</sup> Կոստանդնուպոլսի պատրիարքի զեկուցագիրը և թաքրիրը (հուշագիրը) միապետին հանձնելու հանձնարարությամբ, ինչպես նաև իրավիճակի համակողմանի շարադրման համար կաթողիկոսը հարկ համարեց Սանկտ Պետերբուրգ ուղարկել Էջմիածնի Միևողի անդամ Մեսրոպ եպիսկոպոսին:

1912թ. հոկտեմբերի 10-ին Կովկասի փոխարքան Նիկոլայ 2-րդ ցարին տեղեկացրեց Գևորգ 5-րդի խնդրանքի բովանդակության մասին: Վորոնցով-Գաշկովն իր կողմից պաշտպանեց Ամենայն Հայոց կաթողիկոսի դիրքորոշումը. «Ես կարծում եմ, Ողորմած Տեր, որ այժմ հասել է ժամանակը վերադառնալ տաճկահայերին հովանավորելու բուն ռուսական քաղաքականությանը և անհրաժեշտ է համառորեն փնտրել-գտնել միայն այն ձևերը, որոնց կերպարանքով այն պետք է տվյալ պահին արտահայտվի»: Առաջարկվում էր դիվանագիտական պաշտպանություն իրականացնել Թուրքիայի հայ ազգաբնակչության օգտին. «Իմ խորին համոզմամբ, մենք պետք է, հիմնվելով Բեռլինյան համաձայնագրի վրա, Դռանը կտրականապես հայտարարենք քրդերից հայերի անվտանգության ապահովման մասին»: Կարծիք էր հայտնվում Հայկական հարցում այլ տերություններից առաջ ընկնելու անհրաժեշտության վերաբերյալ. «Իմ կարծիքով, չի կարելի ձեռքից բաց թողնել հայերին պաշտպանելու նախաձեռնությունը, ընդ որում, թերթերում արդեն երևացել է, միգուցե և կեղծ տեղեկություն՝ հայ որոշ քաղաքական գործիչների դիմումը կոմս Բերտոլդին՝ Ավստրիայի միջամտության խնդրանքով»: Կովկասի փոխարքայի մտտեցումը թելադրվում էր Թուրքիայում ռազմական քախումների վայրերում Ռուսաստանի նկատմամբ հայ ազգաբնակչության համակրանքն ապահովելու ձգտումով:<sup>9</sup>

1912թ. հոկտեմբերի վերջին Մեսրոպ եպիսկոպոսը Պետերբուրգում հանդիպումներ ունեցավ Ռուսաստանի նախարարների խորհրդի նախագահ Վ. Ն. Կոկովցեվի և Արտաքին գործերի նախարար Ս. Դ. Սազոնովի հետ: Չրույցների ընթացքում եպիսկոպոսը Բեռլինյան վեհաժողովի 61-րդ հորվածը դիտարկում էր իբրև օսմանյան վարչակարգի կողմից հայերի բնաջնջման համար ճանապարհ բացող ինքնասպանության ուղի: Սկսված Բալկանյան պատերազմը պետք է պարտություն բերեր երիտթուրքերին և տարածքային կորուստներ ապահովեր Եվրոպայում: Այս պայմաններում

միայն Ռուսաստանը կարող էր Թուրքիայի և Բալկանյան երկրների միջև պատերազմի արդյունքների ամփոփմանը նվիրված խաղաղության կոնֆերանսում դառնալ Ման Մտեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածին համանման հոդվածի երաշխավորը: Կոկովցեվը և Մազունովը հայտնեցին հայ ժողովրդի նկատմամբ իրենց համակրանքի, ինչպես նաև՝ Բալկանյան պատերազմի ավարտից հետո Հայկական հարցի բարձրագույն ցանկության մասին: Նիկոլայ 2-րդ ցարը Գևորգ 5-րդի միջնորդության վերաբերյալ դրական կարծիքի ակայությանը Մազունովին հանձնարարեց մշակել արտաքին քաղաքականության գերատեսչության տեսակետը:<sup>10</sup>

Ռուսաստանի պետական իշխանությունների ներկայացուցիչների հետ եպիսկոպոս Մեսրոպի հուսադրող հանդիպումների լուրը հայ հասարակայնության ներկայացուցիչներին թելադրեց 1912թ. հոկտեմբերի վերջին Թիֆլիսում անցկացնել խորհրդակցություն, ուր որոշվեց ստեղծել Հայկական հարցի վճռման գործում Ամենայն Հայոց կաթողիկոսին աջակցություն ապահովող, յոթ հոգուց բաղկացած Ժամանակավոր քյուրո: Ընդունվեց Գևորգ 5-րդին ուղղված դիմում, որպեսզի նա Նիկոլայ 2-րդին հղի մի նոր միջնորդություն Ռուսաստանի՝ Բեռլինյան վեհաժողովի 61-րդ հոդվածի բարենորոգումների կյանքի կոչելու առաքելությունն իր վրա վերցնելու խնդրանքով:<sup>11</sup>

1912թ. նոյեմբերի 5-ին Ս. Դ. Մազունովը Կոստանդնուպոլսում ռուսական դեսպան Ն. Կ. Գիրսին հարցում կատարեց «տաճկահայերի պաշտպանության» անհրաժեշտության և հնարավորության վերաբերյալ: Նոյեմբերի 26-ին հետևեց Գիրսի պատասխանը. «...Ես պետք է խոստովանեմ, որ կաթողիկոսի դիմումը ամբողջությամբ ճշմարտացիորեն արտացոլում է Թուրքական Կայսրության հայ ազգաբնակչության ներկա տրամադրությունները Ռուսաստանի վերաբերյալ»: Դիվանագիտական միջնորդության գաղափարը համարվում էր ծայրաստիճան կարևոր. «Հայ ժողովրդի Հոգևոր առաջնորդի պաշտոնապես հարուցած հարցը Ռուսաստանի համար հանդիսանում է պետական կարևորության առաջնակարգ, համակողմանի մշակում պահանջող հարց, որը ես նախատեսում եմ իրականացնել մոտ ապագայում»: Նշվում էր Հայկական հարցի խնդիրներում արագ նախաձեռնություն դրսևորելու անհրաժեշտությունը. «Ինչպես հայտնի է ինձ, այստեղի հայկական շրջանակներում արդեն կազմվում է ուղերձ, որը պետք է առաջիկա խաղաղության կոնֆերանսում ներկայացվի Մեծ տերություններին: Մակայն իրադարձությունները կարող են հեղինակներին պարտադրել կոնֆերանսից վաղ հանձնել այդ ուղերձը: Այդպիսով մեր ձեռքից բաց կթողնենք նախաձեռնությունը»: Հրատապ էր համարվում Էջմիածնում և Կոստանդնուպոլսում հավաստիացնել հայկական կողմին ձեռնարկված միջոցառումների մասին. «Ինձ այդ կապակցությամբ հարկ է ինչպես կաթողիկոսին, այնպես էլ Կոստանդնուպոլսի պատրիարքին հավատ ներշնչել, որ Կայսերական Կառավարությունը հակվում է հայ ժողովրդի խնդրանքին և, հարկ եղած դեպքում, նրան ցույց կտա հնարավոր հովանավորություն»:<sup>12</sup>

Գևորգ 5-րդի միջնորդության նկատմամբ Ռուսաստանի ղեկավարության դրական վերաբերմունքը Ժամանակավոր քյուրոյին առիթ տվեց 1912թ. նոյեմբերի 25-ին Թիֆլիսում անցկացնել տերության՝ հայկական համայնքների ներկայացուցիչների խորհրդակցություն, որը «Ժամանակավոր քյուրոն» վերանվանվելով «Ազգային քյուրեյի», խնդիր դրեց. ա. Հայ-

կալան հարցի լուծման գործում աջակցել Ամենայն Հայոց կաթողիկոսին, դ. համատեղ գործունեության համար կապեր հաստատել արտասահմանյան հայկական համայնքների հետ, գ. հոգուտ Հայկական հարցի՝ ռուսական հասարակայնության և Ռուսաստանի բարձր խավերի կարծիքի նախապատրաստման համար իրագործել քարոզչական գործունեություն: Ջենարկվեց նաև տաճկահայերի ինքնապաշտպանության հարցը: Ազգային բյուրոյի որոշումը Գևորգ 5-րդը Կովկասի փոխարքային ներկայացրեց որպես ռուսահպատակ բոլոր հայերի կամք, հարցապնդումով, որ Բալկանյան պատերազմի արդյունքներն ամփոփող Լոնդոնի խաղաղության կոնֆերանսում բարձրացվի Հայկական հարցը:<sup>13</sup>

1912թ. նոյեմբերի 30-ին Մազոնովը Գիլսին տեղեկացրեց, որ արևմտահայերի հովանավորության վերաբերյալ Ամենայն Հայոց կաթողիկոսի միջնորդության մասին իր կողմից Մանկո Պետերբուրգում հայտնվել է Թուրքիայի դեսպանին: «Ես այստեղի թուրքական դեսպանի հետ իմ մտերմիկ գրույցում չհապաղեցի այդ հարցի վերաբերյալ նրա ուշադրությունը հրավիրել այն բանին, որ, ըստ մեր տեղեկությունների, վերջին ժամանակներս Փոքր Ասիայում հայերի վիճակը նշանակալիորեն վատացել է, և նրանց արդարացի բողոքն են հարուցում քրդերի կողմից հարստանքները և անձնական ու գույքային անվտանգության քաղաքացիությունը, որ թխում է տեղական վարչակարգերի չկարգավորված և վատ վիճակից»:<sup>14</sup> Դեսպանին հանձնարարվում էր Թուրքիայի արտաքին քաղաքականության գերատեսչության ուշադրությունը հրավիրել պահի լրջության և տեղացի հայերի վիճակի բարելավման անհրաժեշտության վրա. «Մեր կարծիքով, եթե Տաճկահայաստանում ժամանակին չձեռնարկվեն լուրջ բարեփոխումներ, ապա Թուրքական Կառավարությունը ստիպված գործ կունենա Հայկական հարցի այնքան սրացած ձևի հետ, որը կարող է հարուցել Եվրոպական տերությունների միջամտությունը»:<sup>15</sup>

1912թ. դեկտեմբերի 4-ին Գիլսը Մազոնովին զեկուցեց իր Թուրքիայի արտաքին գործերի նախարարին ներկայացրած՝ հայկական ազգաբնակչության նկատմամբ ջարդերը դադարացնելու և Տաճկահայաստանում Բալկանների մահնեղական փախստականների քնակեցումը դադարեցնելու պահանջով. դեմարշի մասին:<sup>16</sup>

1912թ. դեկտեմբերի սկզբին Ամենայն Հայոց կաթողիկոսը Կովկասի փոխարքային հարցում կատարեց ցարին հղված՝ տաճկահայերի վիճակի բարելավմանն ուղղված միջամտության արդյունքների մասին: Դեկտեմբերի 22-ին Վորոնցով-Ղաշկովը հայտնեց Գիլսի կողմից թուրքական կառավարությանը ներկայացված՝ որը պահանջում էր զրադվել տաճկահայերի վիճակի բարելավման խնդրով զրադվելու պահանջով դեմարշի մասին, ուր ի մասնավորի, ասվում էր. «Քրիստոնյա հպատակների օրինական շահերի արհամարհումը Թուրքիայի Եվրոպական զավառներում տարիներ շարունակ եղել է խտրությունների և բարբոթությունների մշտական աղբյուր և, ի վերջո, հասցրել է իր բոլոր հետևանքներով Բալկանյան դժբախտ պատերազմին»:<sup>17</sup> Ռուսաստանի դեմարշը քննադատվում էր Օսմանյան կայսրության քրիստոնյա հպատակների նկատմամբ Ռուսաստանի հովանավորչական ավանդական քաղաքականության դրսևորում: Հայտարարվում էր Բալկանյան պատերազմի արդյունքներն ամփոփող Լոնդոնի խաղաղության կոնֆերանսում Հայկական հարցի բարձրացման անցանկալիության մասին. «Կայսերական կառավարությունը, սակայն,

գտնում է իրենց իսկ՝ հայերի շահերին բոլորովին անհամապատասխան Թուրքիայում Հայկական հարցի քննարկումը Բալկանյան ճգնաժամի կարգավորման համար նախատեսվող Տերությունների միասնական կոնֆերանսում, քանի որ լրիվ հիմքեր ունի կասկածելու հայերին վերաբերվող կենսական հարցի լուծման խնդրում եվրոպական պետությունների միակարծության վրա»<sup>18</sup>: Ռուսաստանի մտեցումը թելադրված էր Կոստանդնուպոլսում ունեցած դեմարշից առավելագույն արդյունքների հասնելու ցանկությամբ և Թուրքիային թույլ չտալ եվրոպական տերությունների անհամաձայնության օգտագործմամբ խուսափել բարենորոգումներից խուսափել թույլ չտալու ցանկությամբ. «Միաժամանակ, տերությունների այդպիսի միաբանության բացակայությունը և դրա հետ կապված՝ տարածայնությունների ծագումը, ինչպես այդ ապացուցեց պատմական տխուր փաստը, թուրքական տեղական վարչության համար այժմ բարենպաստ պայմաններ կստեղծեն խուսափողական վերաբերմունք դրսևորելու հայերի վիճակի բարելավման գործի հանդեպ», - նշում էր Վորոնցով Դաշկովը:

Այսուհանդերձ՝ Հայոց կաթողիկոսին երաշխավորվում էր օգտագործել իր հեղինակությունը՝ հայ քաղաքական գործիչներին ներշնչելու համբերություն, գործնականություն և սթափություն: Կովկասի փոխարքան նշում էր. «Ես հատկապես կարևոր կհամարեի, որ հայերը հատուկ համբերություն և տակտ դրսևորեին ներկա բախտորոշ պահին և անժամանակ միջնորդությամբ կայսերական կառավարության համար չբարդացնեին տաճկահայերի վիճակի բարելավման խնդրի կատարումը»<sup>19</sup>:

Սիջազգային ներկայացուցչական համաժողովում Տաճկահայաստանի բարենորոգումների հարցի բարձրացման՝ ռուսական դիվանագիտության հնարավորության բացակայության մասին տեղեկատվությունը հարուցեց Ամենայն Հայոց կաթողիկոսի «դառը ամսոսանքը»: Մինչ այդ, դեռևս նոյեմբերի 10-ին, Գևորգ 5-րդը արտասահմանում Հայկական հարցը մեծ տերությունների առջև բարձրացնելու համար անձնական ներկայացուցիչ էր նշանակել Պողոս Նուպար փաշային: Եպիսկոպոս Մեսրոպը Ամենայն Հայոց կաթողիկոսի ներկայացուցչի առաքելությունը Մանկա Պետերբուրգում համաձայնեցրել էր նախարարների խորհրդի նախագահի և Արտաքին գործերի նախարարի հետ: Պողոս Նուպար փաշան գտնվում էր Փարիզում և սպասում էր Հայոց հոգևոր առաջնորդի ցուցմունքին՝ միջնորդագիրը մեծ տերությունների ղեկավարներին հանձնելու համար:

1912թ. դեկտեմբերի 24-ին Ամենայն Հայոց կաթողիկոսը Վորոնցով-Դաշկովին խնդրեց ընդունել Ռուսաստանի հայ հասարակայնության ներկայացուցիչներին: Նշվում էին պատգամավորության անդամները. Էջմիածնի Մինողի և կաթողիկոսի գրասենյակի կառավարիչ եպիսկոպոս Մեսրոպը, հոգևոր ճեմարանի ռեկտոր վարդապետ Բագրատը, Կովկասում Հայ բարեգործական միության նախագահ Ս. Հարությունյանը և Թիֆլիսի քաղաքագլուխը:<sup>20</sup> Հանդիպման ընթացքում Կովկասի փոխարքան մնաց Ամենայն Հայոց կաթողիկոսին շարադրվածի դիրքերում:<sup>21</sup>

Այդ նույն ժամանակ, 1912թ. դեկտեմբերի սկզբին, ինչպես հայտնի է՝ ներքին գործերի նախարար Ռաշիդ փաշայի ղեկավարությամբ ստեղծվեց բարեփոխումների նախագիծ՝ հայկական ոչ թե վեց, այլ չորս վիլայեթների՝ Վանի, Բիթլիսի, Դիարբեքիի և Խարբերդի համար: Բացառվել էին Էրզրումը և Մերաստիան, որ նշանակում էր Արևմտահայաստանի տարածքի կրճատում: Բարենորոգվող վիլայեթների ղեկավարումը հանձնարար-

վում էր գլխավոր տեսչին: Նրան առընթեր հիմնվում էր հատուկ հանձնա-  
 ժողով՝ բաղկացած երեք մահմեդականներից և երեք քրիստոնյաներից:  
 Գլխավոր տեսչին ենթարկվում էին դատական և ֆինանսական բաժիննե-  
 րը, ազգաբնակչության անվտանգության ապահովումը և կենսամակարդա-  
 կի բարձրացումը: Նրան վստահվում էր դատական և ֆինանսական ոլորտ-  
 ներում բարեփոխումների անցկացումը, որոնք ենթակա էին հանձնաժողո-  
 վի հետ համաձայնեցման: Բարձր Դուռը, իրականացնելով գլխավոր տե-  
 սուչի ընտրությունն ու նշանակումը, պահպանում էր հսկողությունը նրա  
 գործունեության վրա:

Բարենորոգումների նախագիծը սկզբում, 1912թ. դեկտեմբերի 8-ին,  
 քննարկվեց հայ-թուրքական հանձնաժողովի կողմից: Հայկական կողմը  
 ներկայացնում էին Կոստանդնուպոլսի նախկին պատրիարք Մ. Օրմանյա-  
 նը, թուրքական «Մարախ» լրագրի խմբագիր Կելիկյանը և հայտնի ոսկերիչ  
 Ի. Գյուլպեկյանը: Հանձնաժողովին՝ Կոստանդնուպոլսի պատրիարքի  
 անունից մասնակցություն ունենալու լիազորություն չունեին հայ գործիչնե-  
 րը: Չնայած դրան, նրանք պահանջեցին բարենորոգումների միջազգային  
 երաշխիքներ, քանի որ հաշվի էր առնվում նախկին խոստումների պատ-  
 մական փորձը, ինչպես նաև Էրզրումի վիլայեթի՝ հայկական վիլայեթների  
 կազմում ներգրավվելու անհրաժեշտությունը: Հանձնաժողովում բարձր  
 դիրք ունեցող հայերի գործունեությունը հարուցեց հասարակայնության  
 սուր բողոքները, քանի որ ի դեմս նրանց տեսնում էին թուրքական վարչա-  
 կարգի նկատմամբ լոյալ անձանց: Բողոքներով հանդես եկան Կոստանդ-  
 նուպոլսի պատրիարքը և Ամենայն Հայոց կաթողիկոսը: Արշարունին հայ-  
 տարարեց, որ հանձնաժողովի ընդհանրապես բոլոր հայ փորձագետները,  
 իսկ Գևորգ 5-րդը՝ որ Օրմանյանը լիազորված չեն հայ ժողովրդի շահերն  
 արտահայտելու:<sup>22</sup>

Թուրքական կողմը ստիպված էր խուսաճալ: Հայտարարվեց բա-  
 րենորոգումների անցկացման համար հայկական վեց վիլայեթների  
 ընդգրկման մասին, որոնք պետք է ենթարկվեին երկու գլխավոր տեսուչնե-  
 րին: Քանի որ նախագիծը պաշտոնապես չէր ներկայացվել Կոստանդնու-  
 պոլսի պատրիարքին, նա խուսափեց կարծիք հայտնելուց: Ազգային ժողո-  
 վի Խառը խորհուրդը 1912թ. դեկտեմբերի 26-ին արտահայտվեց են-  
 թադրյալ բարենորոգումների վերաբերյալ: Որպեսզի ծրագրված բարենո-  
 րոգումներին տրվեր «կշռադատված բնույթ», նախատեսվում էր կապեր  
 հաստատել Թուրքական կառավարության հետ:<sup>23</sup> Վերահսկող մարմին էր  
 դառնում Ազգային ժողովի ազգային կառավարման անվտանգության  
 հանձնաժողովը: Մերտ հարաբերություններ սկսվեցին շահագրգիռ երկրնե-  
 րի՝ Ֆրանսիայի, Ավստրալիայի, Գերմանիայի և Ռուսաստանի հետ:<sup>24</sup>

Անվտանգության հանձնաժողովը բարենորոգումների նախագիծ  
 մշակեց վեց վիլայեթների՝ Վանի, Բիթլիսի, Դիարբեքի, Էրզրումի, Խար-  
 բերդի և Մերստոփայի համար: Դրանցում քնակվող հայերի ընդհանուր թի-  
 վը որոշնկիացվում էր 1 մլն 18 հազար, իսկ ամբողջ Օսմանյան Թուրքիա-  
 յում այն ավելի քան 2 մլն էր: Եկեղեցական գործիչները որպես բարենորո-  
 գումների հիմք էին ընդունում Օսմանյան կայսրության առանձին տիրույթ-  
 ների կառուցվածքի տարրեր ձևերը: Կոստանդնուպոլսի պատրիարք Ար-  
 շարունին վճռականապես մերժում էր երիտթուրքական վարչակարգի վե-  
 րափոխման հնարավորությունը և առաջարկում էր հաշվի առնել ավստրի-  
 ական փորձը Հերցեգովինայում: Կոստանդնուպոլսի նախկին պատրիարք

Օրմանյանը ցանկալի էր համարում Ման Ստեֆանյոյի պայմանագրի 16-րդ հոդվածի վերականգնումը: Առաջարկվում էր հայկական վիլայեթների կառավարման՝ լիբանանյան նմանությամբ տարբերակ: Հանրավոր էր համարվում հայկական վիլայեթների անցումը Ռուսաստանի կազմի մեջ:<sup>25</sup>

Հայոց եկեղեցու առաջնորդը պետք է հայտարարեր հոտի դիրքորոշումը ռուսական դիվանագիտության վերաբերյալ: 1913թ. հունվարի 16-ին Գևորգ 5-րդը ընդունեց պատասխանատու որոշում՝ Հայկական հարցը չմտցնել Բալկանյան պատերազմի արդյունքներն ամփոփող դեսպանների միջազգային կոնֆերանս: Վորոնցով-Դաշկովին հարողովեց, որ նրա՝ 1912թ. դեկտեմբերի 22-ի նամակի ստացումից հետո իր կողմից ցուցում է տրվել Պողոս Նուպար փաշային «չդիմել դեսպանների Լոնդոնի կոնֆերանսին և առայժմ իր գործունեությունը սահմանափակել մեծ Ռուսաստանի հսկողության տակ Տաճկահայաստանում անհրաժեշտ բարենորոգումների անցկացման օգտին կառավարությունների և Եվրոպական պետությունների ազդեցիկ շրջանակների կարծիքների և տրամադրությունների նախապատրաստմամբ»:<sup>26</sup> Մատնանշվում էր հողային հարցի սրումը և մահմեդական փախստականների հոսքը Բալկաններից դեպի Տաճկահայաստան: Հույս էր հայտնվում, որ Ռուսաստանի կառավարությունը դեսպանի և հյուպատոսների միջնորդությամբ Թուրքիայում կկարողանա հայերին պաշտպանել թուրքերի և քրդերի ոտնձգություններից՝ մինչև նախատեսված բարենորոգումների անցկացումը:<sup>27</sup>

1918թ. փետրվարի 8-ին կոմս Վորոնցով-Դաշկովը Սազոնովին տեղեկացրեց Թուրքիայում Հայկական հարցի վերաբերյալ Ռուսաստանի կառավարության բոլոր դրույթների իրագործման մասին: Տեղեկացվեց նաև Ամենայն Հայոց կաթողիկոսի պատվիրակության ընդունման մասին, որը ներկայացրել էր տաճկահայերի վիճակի բարելավման վերաբերյալ ցարին ուղղված, 1912թ. դեկտեմբերի 24-ով թվագրված նամակ: Հայոց եկեղեցու առաջնորդը ցարական ունկնդրություն էր խնդրում, որպեսզի առաջ քաշի Ռուսաստանը բարենորոգումների անցկացման համար Թուրքիայի վրա ճնշում գործադրելու հարցը: Ենթադրվում էր բարեփոխումների կատարման ընթացքի հսկողությունը հանձնարարել մեծ տերությունների դեսպաններին և ներկայացուցիչներին: Կարևոր էր համարվում՝ Թուրքիային թույլ չտալ, նախորդ տարիների օրինակով, զբաղվել բարենորոգումների քաշքշուկով: Հայրապետի կարծիքով՝ այդ նպատակին էր ծառայում չորս վիլայեթների թուրքական նախագիծը: Կովկասի փոխարքան իր հերթին բարենորոգումների օգտին կատարած հայկական շրջանակների գործունեությունը համարում էր Ռուսաստանի համար դրական երևույթ: Հարցվում էին հետագա հրահանգներ:<sup>28</sup>

Գևորգ 5-րդի անհանգստությունը երիտթուրքերի ապակառուցողական դիրքորոշման նկատմամբ հիմնավորված բնույթ էր կրում: Միջազգային ճնշման բացակայությունը թուրքերի կողմից ընդունվեց որպես հայկական զանգվածային ջարդեր կազմակերպելու հարմար պահ: Ըստ Էրզրումից Գիրսին 1913թ. ապրիլի 7-ին գլխավոր հյուպատոս Ադամովի զեկույցի, վիլայեթում հայկական կոտորածների բացահայտ քարոզչություն էր տարվում: Մարտի 21-ին Էրզրումից 35 վերստ հեռավորության վրա գտնվող Հասան-դալա գյուղի հետևակի կապիտան Հասան աղան քրդերին հրահանգում է. «Մեր բոլոր դժբախտությունները գալիս են քրիստոնյա ռայայից, որի հետ, քանի դեռ նա մեր իշխանության տակ էր, չափազանց շատ

ենք ներքանկատ վարվել: Այժմ, քանի դեռ ուշ չէ, չպետք է կրկնել նույն սխալները, առավելա, որ սահմանադրությունն արդեն հավասարեցրել է հայերին ու մահմեդականներին»: Կապիտանը հայտարարում է հայկական ազգաբնակչության նկատմամբ զանգվածային ջարդի նախապատրաստման մասին. «Ես իմ կողմից ձեռք եմ առել բոլոր անհրաժեշտ միջոցները և Բասենի գավառի ամբողջ քուրդ բնակչությանը համոզել եմ այլևս չդանդաղեցնել հայերի ջարդերն ու նրանց գույքի թալանը և նույն խորհրդով դիմում եմ ձեզ: Բոլոր քեկերը, որոնց հետ ես տեսնվել եմ, չէին կարող չհամաձայնվել ինձ հետ, որի համար էլ հուսով եմ, որ դուք ևս կհետևեք նրանց գովելի օրինակին»:<sup>29</sup>

Անարեկչությունը տիրում էր Գիարբեքիում: Վիլայեթի վալին իրախուսում էր հակաքրիստոնեական կոտորածները: Տեղի ունեցող դեպքերի հավաստիությունը հաստատում էին Գիարբեքիի ռուսական հյուպատոսի զեկույցները: Հայերի նկատմամբ բռնությունների և կոտորածների ծավալը Գիարսին մոտեց 1913թ. ապրիլի 24-ին բողոք ներկայացնել Թուրքիայի արտաքին գործերի նախարարին:<sup>30</sup>

Թուրքիայի հայ ազգաբնակչության նկատմամբ բռնությունների աճը հարուցեց ազգային շրջանակների մտահոգությունը: 1913թ. ապրիլի 25-ին այս հարցը քննության առնվեց Ազգային ժողովում: Ապրիլի 29-ին Կոստանդնուպոլսի պատրիարքի պատվիրակությունը, որի կազմում էին պատրիարք Արշարունին, երկու եպիսկոպոսները և Խառը խորհրդի ղեկավարությունը, մեծ վեզիրին հուշագիր ներկայացրեց: Ուշադրություն էր հրավիրվում քրդերի և թուրքերի շրջանում հակահայկական տրամադրությունների աճի վրա, խոսվում էր Արսնայի և Վանի վիլայեթներում լարվածության մասին, մատնանշվում էր հայերից՝ զենքը բռնագրավելու և բռնացողներին զինելու փաստը: Վանում ազատ էին արձակվել հայ հոգևորականին և ուսուցչին սպանողները: Բռնությունների մեղքի պատասխանատվությունը վերագրվում էր վիլայեթների վարչակազմին: Մեծ վեզիրին առաջարկվում էր հրահանգ հրապարակել «հակաօրինական գործողությունների» համար պաշտոնյաներին պատասխանատվության ենթարկելու մասին: Մեծ վեզիրը ընդունեց քերված փաստերի իսկությունը և խոստացավ պատժել մեղավոր կառավարիչներին:<sup>31</sup>

Այդ նույն ժամանակ կովկասահայության պատվիրակությունը, որի մեջ մտնում էր նաև Թիֆլիսի թեմի առաջնորդ Մեսրոպյը, կոմս Վորոնցով-Դաշկովից թույլտվություն խնդրեց Թուրքիայի հայերի ինքնապաշտպանության հնարավորություն ստեղծելու վերաբերյալ: 1913թ. մայիսի 2-ին Կովկասի փոխարքայի կողմից խնդրանքը հաղորդվեց Մազոնովին:<sup>32</sup>

1913թ. մայիսի 5-ին Գևորգ 5-րդը Կոստանդնուպոլսի դեսպանությունից ստացավ 36 հոդվածից կազմված «Անատոլիայում Հայկական մարզի բարենորոգումների» նախագիծը: Նախատեսված հայկական մարզը պետք է բաղկացած լիներ վեց՝ Էրզրումի, Վանի, Բիթլիսի, Գիարբեքի, Խարբերդի և Մերասառիայի վիլայեթներից, որը պետք է ղեկավարեր Եվրոպացի գեներալ-նահանգապետը և գտնվեր Անտանտի տերությունների՝ Անգլիայի, Ռուսաստանի և Ֆրանսիայի հսկողության ներքո: Գեներալ-նահանգապետը, իբրև գործադիր իշխանության ղեկավար, ունենալու էր ծառայողներին ազատելու և ճշանակելու իրավունք: Նրան էին ենթարկվելու ժանդարմերիան, ոստիկանությունը և կարգ ու կանոնի պահապանները: Գեներալ-նահանգապետի նախագահության տակ պետք է գտնվեր հինգ

տարով ընտրված Մարգարյան ժողովը՝ կազմված քրիստոնյաներից և մահ-մեղականներից: Մարգարյան ժողովը պարտավորվում էր տարեկան մեկ անգամ հավաքվել երկամսյա նստաշրջանի՝ բյուջեի և դատարանի հաշվետվությունների հաստատման, արդյունաբերության և առևտրի զարգացման միջոցների քննարկման համար: Ընթացիկ գործավարությունում զենեքալ-նահանգապետին պետք է օգնեք Վարչական խորհուրդը: Հայկական մարզը պետք է ունենար երեք աստիճանի վարչակարգ՝ շրջան, տեղամաս և գավառակ: Երջանները և տեղամասերն ունենալու էին իրենց Երջանային ժողովները: Հայկական մարզի մայրաքաղաքն առանձնացվում էր որպես հատուկ կառավարիչ, ընդհանուր ժողով և խորհուրդ ունեցող հատուկ շրջան: Նախագիծը նախատեսում էր միասնական Հայկական մարզի ստեղծում և ուներ առաջադիմական բնույթ, որի իրագործումը թույլ կտար որոշակի չափով ապահովել կառավարման օրինականությունը և հաստատել կարգ ու կանոն:<sup>33</sup>

Թուրքիայում Հայկական մարզի ստեղծման նախագիծն անշուշտ շոշափում էր Եփրոսյայի առաջատար երկրների շահերը: Ուստի՝ 1913թ. մայիսի 24-ին Արտաքին գործերի նախարարության ժամանակավոր ղեկավար Ա. Ներսատովը Փարիզի, Լոնդոնի, Վիեննայի և Հռոմի դեսպաններին ցուցում տվեց տեղական Իշխանություններին ներկայացնել հայկական մարզերի համար բարենորոգումների զարգացումը: Առաջատար երկրների դեսպանների կոնֆերանսը պետք է մշակեր բարենորոգումների հիմունքները և դրանց իրականացման միջոցառումները՝ Երկեստ ունենալով 1895թ. բարեփոխումների ծրագիրը: Ռուսաստանի դիրքորոշումը հասցվեց նաև Բեռլին: Մայիսի 27-ից մինչև հունիսի 10-ը Անգլիայի և Ֆրանսիայի դեսպանները հայտնեցին Ռուսաստանի հետ իրենց դիրքորոշումը համաձայնեցնելու ձգտումը՝ դեսպանների նախնական խորհրդակցությունում հաշվի առնելով դաշնակցային հարաբերությունները, սակայն Գերմանիան և Ավստրո-Հունգարիան հարմար էին գտնում մասնակի խորհրդակցություններին ընդգրկել նաև Թուրքիայի ներկայացուցիչներին:<sup>34</sup> Այնպես էր, որ այդ մտտեցմամբ մեծ տերություններից յուրաքանչյուրը ձգտում էր Թուրքիայում պաշտպանել իր շահերը:

Ինչպես հայտնի է՝ Լոնդոնի կոնֆերանսի 1913թ. մայիսի 30-ի խաղաղության պայմանագիրը ամփոփեց առաջին Բալկանյան պատերազմի արդյունքները: Բալկանյան երիտասարդ պետությունները՝ Հունաստանը, Բուլղարիան, Սերբիան, Չերնոգորիան ստացան տարածքային հավելումներ, իսկ Թուրքիայի Եփրոսյական մասի տարածքը որոշվեց սահմանել Միդիա-Էթնոսով: 1913թ. հունիսի 3-ին ռուսական դեսպանատան նախագիծը ներկայացվեց Անտանտի երկրների ներկայացուցիչների նախապատրաստական հանձնաժողովի քննարկմանը, որի կազմի մեջ էին մտնում ռուսական և անգլիական դեսպանությունների առաջին քարզմաններ Մանդելտանը և Ֆիցմորիսը, ինչպես նաև Ֆրանսիայի դեսպանատան քարտուղար կոմս Սեն-Կատենը: Դրական եզրակացությունից հետո դրա մեջ աննշան փոփոխություններ մտցրին Եռյակ միության երկրների դեսպանները: Նախագծի հիմքն էին կազմում առաջատար երկրների նախկինում մշակված փաստաթղթերը. Ֆրանսիայի, Անգլիայի և Ռուսաստանի դեսպանների 1895թ. մարտ-ապրիլի հուշագիրը, Եռյակ միության երկրների 1895թ. մարտ-ապրիլի վարչական բարենորոգումների ծրագրերը, Լիբանանի վերաբերյալ փաստաթղթերը և այլն: Պահպանվեցին ռուսական նախագծի

հիմնական դրույթները: Հայկական մարզի զեներալ-նահանգապետ պետք է դառնար տուլթանի կողմից հիմզ տարով նշանակված թուրքահայատակ քրիստոնյա կամ, ավելի շուտ, Եվրոպացի:

Դեպքան Գլխորդ հունիսի 6-ին Սազոնովին տեղեկացրեց Արևմտյան Հայաստանի քարենորոգումների հարցի շուրջը Անտանոսի երկրների միասնական դիրքորոշման և Կոստանդնուպոլսում առաջատար տերությունների դեսպանների քննարկմանը համապատասխան նախագծի ներկայացման մասին:<sup>35</sup> Ռուսաստանի կառավարությունը շրջաբերական նուստայով առաջատար երկրներին կոչ արեց Կոստանդնուպոլսում հավատարմագրված դեսպաններին հանձնարարել անցկացնել հայկական քարենորոգումների վերաբերյալ կոնֆերանս:<sup>36</sup>

Հայկական հարցում դրական տեղաշարժն արժանացավ Գևորգ 5-րդ կաթողիկոսի արձագանքին: 1913թ. հունիսի 11-ին կոնս Վերոնցով-Ղաշկովին հաղորդվեց ռուսական դիվանագիտության հետ հայկական կողմի ներդաշնակորեն համագործակցելու ձգտման մասին. «Ես ևս իմ հոտը, չնայած իրավիճակի ամբողջ վտանգությանն ու լրջությանը, ձգտում եմք գործել Ձեր և Կայսերական Կառավարության ցուցումների համաձայն՝ ամբողջությամբ հավատացած, որ Թուրքիայում հայերի դրության բարելավման խնդրի լուծումը գլխավորապես կախված է Մեծ Ռուսաստանից, և որ Ռուսաստանը չի հապաղի քարեկամ մյուս Մեծ տերությունների հետ համատեղ ձեռնարկել բոլոր միջոցները, որպեսզի այդ հարցը մոտ ապագայում Թուրքիայի հայ ազգաբնակչության համար բարեհաջող լուծում գտնի»:<sup>37</sup> Հայ գործիչների գործունեության լեյտմոտիվը բնութագրվում էր ծայրաստիճան զսպվածությամբ ու հանգստությամբ: Ամենայն Հայոց կաթողիկոսը Պողոս Նուպար փաշային հրահանգել էր գործել Կոստանդնուպոլսի պատրիարքարանի և Ռուսաստանի հետ համատեղ:<sup>38</sup>

Կոստանդնուպոլսի պատրիարքի դիմումի, Ռուսաստանի և Թուրքիայի հայ հասարակայնության ազդեցության ներքո 1912թ. աշնանը կաթողիկոս Գևորգ 5-րդը Ռուսաստանի կառավարության առջև հանդես եկավ Բարձր Դռան հայերի վիճակի բարելավման նախաձեռնությամբ: Մերձավոր Արևելքում իր ազդեցության ուժեղացմամբ շահագրգռված Պետերբուրգյան արքունիքը որոշում կայացրեց՝ աջակցել Ամենայն Հայոց կաթողիկոսի նախաձեռնությանը: Ռուսական դիվանագիտությունը սկզբում նախատեսեց Հայկական հարցը բարձրացնել Բալկանյան պատերազմի արդյունքներն ամփոփող դեսպանների խաղաղության կոնֆերանսում, ապա որոշեց այն տեղայնացնել ռուս-թուրքական հարաբերությունների շրջանակում: Համոզվելով թուրքական կողմի՝ գործը դեպի բարեփոխումներ տանելու պատրաստակամության բացակայության մեջ, Պետերբուրգյան արքունիքը առաջատար երկրների հետ քննարկելու համար մշակեց Տաճկահայաստանի քարենորոգումների նախագիծ: Հայկական հարցի լուծման խնդրում դրսևորելով շահագրգռվածություն և զսպվածություն, Ամենայն Հայոց կաթողիկոսն այդ գործընթացում նույնպես կապեր էր պահպանում հայ հասարակայնության տարբեր շրջանակների ներկայացուցիչների հետ:

2. Արևմտյան Հայաստանում քարեփոխությունների ծրագիրը և հայոց Եկեղեցու դիրքորոշումը

Ինչպես հայտնի է՝ 1914թ. հունվարի 26-ին (փետրվարի 8-ին) Ռուսաստանի հավատարմատար Գուլկևիչը և մեծ վեզիր Սայիդ Հալիմը ստորագրեցին Արևելյան Անատոլիայում հայկական քարեմոդոլությունների վերաբերյալ համաձայնագիրը: Նախատեսվում էր երկու սեկտորների ստեղծում՝ գլխավոր տեսուչներով: Առաջին սեկտորը ներառում էր Էրզրումի, Տրապիզոնի և Մերաստիայի, իսկ երկրորդը՝ Վանի, Բիթլիսի, Խարբերդի և Դիարբեքիի վիլայեթները: Գլխավոր տեսուչների իրավասության մեջ էին մտնում արդարադատության, ժանդարմերիայի, ոստիկանության վերահսկումը, «հասարակական անդորրի» խախտման դեպքում՝ զորամասերի օգտագործումը: Նրանց էր վերապահվում պաշտոնյաների նշանակումը և պաշտոնազրկումը: Տեսուչների պարտականությունների և գործողությունների շրջանակը, որոնց ենթակա էր հողային հարցը, նախատեսվում էր որոշել հատուկ հրահանգով՝ պաշտոնի նշանակման ժամանակ: Կառավարական հարդարագրությունները, հրամանները և օրենքները յուրաքանչյուր սեկտորում պետք է հրապարակվեին տեղական լեզվով: Սեկտորների ազգաբնակչությանը թույլատրվում էր դատական կամ վարչական հիմնարկություն դիմելիս օգտվել մայրենի լեզվից: Բնակչությունն իրավունք ուներ զինվորական պարտականությունը կատարել հայրենի վայրում, սակայն զորամասերը պետք է լրացվեին նաև այլ շրջանների ներկայացուցիչներով: Համիդիե ջոկատները վերածվում էին պահեստային հեծելազորի, որը զենք կրելու իրավունք ուներ միայն զորահավաքների և զորավարությունների ժամանակ:

Վիլայեթների ընդհանուր ժողովների լիազորությունները հիմնվում էին 1913թ. մարտի 13-ի օրենքի վրա: Բոլոր էթնոսների ներկայացուցիչների համամասնությունը պետք է որոշվեր ըստ մարդահամարի, որն անցկացվելու էր մեկ տարվա ընթացքում՝ գլխավոր տեսուչների հսկողությամբ: Մինչ այդ, Վանի և Բիթլիսի կոմիտեների և ընդհանուր ժողովների (մեջլիս ունում) կազմը որոշվելու էր քրիստոնյաների և մահմեդականների ներկայացուցիչների հավասար քանակով: Ներկայացուցչական հավասարության սկզբունք էր նախատեսվում Էրզրումի վիլայեթի ընդհանուր ժողովի համար, եթե մեկ տարվա ընթացքում չիրականացվեր ազգաբնակչության քվաքանակը ճշտադ մարդահամար: Մերաստիայի, Խարբերդի և Դիարբեքիի մեջլիս ունու՜մի անդամներն ընտրվում էին համամասնական սկզբունքով: Մահմեդականների համար հիմք էր ընդունվում վերջին ընտրական ցուցակը, իսկ քրիստոնյա բնակիչների թիվը պարտավոր էին ներկայացնել տեղական համայնքները: Գլխավոր տեսուչներին իրավունք էր վերապահվում, կառավարման կարիքների անհամապատասխանության դեպքում, համամասնական ներկայացուցչությունը փոխարինել հավասարության սկզբունքով: Համամասնական սկզբունքի կիրառման ընթացքում նախատեսվում էր կառավարման կոմիտեներում (եջումեն) տեղեր հատկացնել ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներին: Վարչական խորհուրդները կազմավորվում էին մահմեդականների ու քրիստոնյաների հավասար թիվ ներկայացուցիչներից: Ներկայացուցչության հավասարության սկզբունքը տարածվում էր ոստիկանության, ժանդարմերիայի և վարչական մարմինների պաշտոնները զբաղեցնելու վրա:<sup>39</sup>

Կնքված ռուս-թուրքական համաձայնագիրը «Արևմտյան Հայաստան» հասկացությունը հավասարեցնում էր վեց վիլայեթներ և երկու սեկտորներ ընդգրկող «Արևելյան Անատոլիային»: Երիտթուրքերն ստիպված էին ընդունել Վանում, Բիթլիսում և Էրզրումում հայկական զգալի ազգաբնակչության առկայությունը, որը բաժանվում էր երկու սեկտորի: Մերաստիայում, Խարբերդում և Դիարբեքիում վարչական կառույցներում ապահովվում էր մահմեդական ազգաբնակչության գերակայություն: Հայկական բարենորոգումներին տրվում էր վարչա-իրավական բնույթ: Գլխավոր տեսուչների գործունեությունը դիտվում էր որպես թուրքական վարչակարգի շահերի ներկայացուցչություն: Ուրվագծվում էր բարենորոգումների ընդհանուր նախագիծը՝ հրահանգները, զրագրությունը, բարեփոխումները, իսկ հողային հարցը դեռևս պետք է որոշվեր: Հայկական սպասելիքների ոգով լուծվեց դպրոցական հարցը: Երիտթուրքերը ձգտում էին վերահսկողության տակ պահել ռազմական իրավիճակը, թույլ չտալ տեղական կազմավորումներից և տեղի թուրքական զորամասեր՝ այդտեղ ավելացնելով այլ շրջանների ներկայացուցիչների քանակը:

Փաստաթուղթն արտացոլում էր բարենորոգումների այն մակարդակը, որին Ռուսաստանի ճնշման ներքո և Գերմանիայի ցանկությամբ համաձայնվել էին երիտթուրքերը: Նախատեսված դրույթների իրագործումը, ստեղծելով ողջ մնալու և զարգացման պայմաններ, կարող էր նույնիսկ դրական դեր խաղալ «Արևելյան Անատոլիայի» հայ ազգաբնակչության համար: Ի տարբերություն մանդեշտամյան նախագծի, այստեղ խոսք անգամ չկար միասնական նահանգի, ընդհանուր ժողովի վերաբերյալ, այլ նախատեսվում էր սոսկ վարչական տարանջատում և մշակութային զարգացում՝ կառավարման մեջ համամասնական ներկայացուցչությամբ: Այնուամենայնիվ, բարենպաստ պայմաններում և խաղաղ զարգացման դեպքում վարչական առանձնացումը կարող էր հանգեցնել ազգային անջատվածության:

Շահագրգիռ կողմերն իրենց վերաբերմունքն արտահայտեցին ձեռք բերված համաձայնության վերաբերյալ: 1914թ. հունվարի 2-ին դեսպան Գիրսն արտաքին գործերի նախարարին ներկայացրեց Հայկական հարցի նախագծի մշակման ընթացքի վերլուծական ամփոփագիրը: Դրանում խոսվում էր մանդեշտամյան նախագծի համեմատ 1914թ. հունվարի 26-ի համաձայնագրի նվազագույն ձեռքբերումների մասին, որը սակայն «հայ ազգաբնակչության համար քաց էր անում ավելի երջանիկ ժամանակաշրջան»: Ռուսական դեսպանի կարծիքով 1914թ. հունվարի 26-ի համաձայնագիրը կարելի էր համեմատել Բուլղարական մարզը ձևավորած 1870թ. հրովարտակի հետ, որը նպաստեց բուլղարների ազատագրմանը և պետականության ստեղծմանը: Դրանում էր արժևորվում համաձայնագրի գլխավոր ձեռքբերումը.<sup>40</sup> «Հայերը չեն կարող չզիտակցել, որ այժմ կատարվեց թուրքական լծից իրենց ազատագրման առաջին քայլը»:<sup>41</sup>

Կոստանդնուպոլսի գերմանական դեսպանությունը կանցլեր Բեքման-Հոլվիգին հղած 1914թ. հունվարի 27-ից փետրվարի 9-ի զեկուցագրում կնքված համաձայնագիրը գնահատում էր որպես կարևոր առաջընթաց թուրքական պետության պահպանման գործում. «Եթե համեմատենք պահանջող կողմ Ռուսաստանի հզորությունը Թուրքիայի ներկա տկարության, մյուս կողմից էլ՝ ձեռք բերված արդյունքները մանդեշտամյան ծրագրի հետ, ապա կարելի է ասել, որ Դուռը հասավ դիվանագիտական զգալի

հաջողության, որը կարող է ներկա վարչակարգին Եվրոպայում ամենուր ապահովել վստահություն»:<sup>42</sup> Լուծված էր համարվում Բարձր Դռան անկման դեպքում Պետերբուրգյան արքունիքի հետ փոխհարաբերությունների կառույցների ստեղծման գերմանական դիվանագիտության խնդիրը. «Վերջապես, հաշվի առնելով Թուրքիայի ապագայի անհայտությունը, այն, ինչը գերմանա-ռուսական համագործությամբ արևելյան քաղաքականության հարցում հասցրեց դրական արդյունքի, այնուամենայնիվ կարող է դիտվել որպես հաճելի նշան և դրական նախադեպ»:<sup>43</sup>

Մագոնովն սկզբում համաձայնագրի կնքման կապակցությամբ «մեծ բավարարվածություն» հայտնեց հավատարմատար Գուլկևիչին, սակայն բովանդակության հետ ծանոթանալը տեղիք տվեց մի շարք դիտողությունների: Դեսպան Գիրսին հանձնարարվեց մինչև մարդահամարի անցկացումը հայ ազգաբնակչության համար վիլայեթների ընդհանուր ժողովների կազմում հասնել որոշակի ներկայացուցչության. Վանում, Բիթլիսում և Էրզրումում՝ հավասար, իսկ Սեբաստիայում, Խարքերդում և Դիարբեքիում՝ տեղերի մեկ երկրորդի հաստատմամբ: Մեծ վեզիրն այդ մտնեցումն անընդունելի և անհնար համարեց պառլամենտում անցկացնելու համար: Իսկ Գիրսը Բարձր Դռնից պահանջեց ընթրնողություն, միաժամանակ վախենալով մերժման դեպքում կորցնել ձեռք բերվածը: Ռուսաստանի դիրքորոշման էությունը կայանում էր այն բանի ըմբռնման մեջ, որ թուրքերը, վիլայեթների ընդհանուր ժողովները լրացնելով իրենց ներկայացուցիչներով, հանգիստ կերպով կարող էին կեղծել մարդահամարի տվյալները՝ մեծ տերություններին կանգնեցնելով կատարված փաստի առաջ, հայերին կհետացնեին հասարակական ասպարեզից:<sup>44</sup> Եռյակ միության երկրները քննադատության ենթարկեցին Պետերբուրգյան արքունիքի «անգիջողակա-նությունը»՝ հայտարարելով մեծ վեզիրի տեսակետի հիման վրա հունվարի 26-ի համաձայնության հաստատման հնարավորությունը: Մեծ Բրիտանիայի ղեկավարությունը Մագոնովին «խորհուրդ» տվեց ունկնդրել քանակա-նության ձայնին և բավարարվել ձեռք բերածով, մանավանդ, որ «Համա-ձայնագիրը բավարարել է հայոց պատրիարքությանը: Առստանդուպու-սում Ֆրանսիայի լիազոր ներկայացուցիչը գտնում էր, որ Բարձր Դռուը «մեծ զիջումների չի գնա»:<sup>45</sup>

1914թ. փետրվարի 2-ին Առստանդուպուսի պատրիարքությունը նախապատրաստեց 35 կետից բաղկացած «Հրահանգների նախագիծ գլխավոր տեսուչների համար», որն ընդգրկում էր յուրաքանչյուր սեկտորում նրանց գործողությունների շրջանակը: Գլխավոր տեսուչներին կարգադրվում էր ապահովել «հասարակական անվտանգությունը» և Տրապիզոն, Էրզրում, Վան, Բիթլիս, Խարքերդ, Դիարբեքի և Սեբաստիա վիլայեթներում պայմաններ ստեղծել կառավարման բարելավման համար: Պարտավորեցվում էր միջոցներ ձեռնարկել բոլոր վարչա-իրավական առ-յանների կարգավորման և Արևմտյան Հայաստանի զարգացման համար. «Փնտրել և գործնականորեն ձեռք առնել անհրաժեշտ միջոցներ, որպեսզի արագացվի երկրի տնտեսական, ֆինանսական և մտավոր մակարդակի բարձրացումը»: Գլխավոր տեսուչի ատյանը դիտարկվում էր որպես բարե-փոխիչ, վերահսկիչ և գործադիր. «Դա Կենտրոնական կառավարության և Վալիի միջև հաղորդակցման մարմին է»:<sup>46</sup> Գլխավոր տեսուչները պարտա-վոր էին սեկտորներում սեփական հայեցողությամբ ընտրել իրենց նստա-վայրը: Որոշակիացվում էր գլխավոր տեսուչների մերձավոր անձանց

շրջանակը՝ օգնական և գրասենյակի պետ, ֆինանսների, ներքին և արտաքին քաղաքական հարցերով, հաղորդակցության ճանապարհների, երկրագործության և արդյունաբերության գծով մասնագետ-խորհրդականներ: Օժանդակ կազմի լիազորությունները պետք է որոշեին իրենք՝ գլխավոր տեսուչները: Հասարակական կարգի պահպանման համար, աներաժեշտության դեպքում, նախատեսվում էր օգտագործել սեկտորների ռազմական ուժերը: Նահանգների և սեկտորների վարչական սահմանների հաստատումից, ժողովների ստեղծումից հետո, գլխավոր տեսուչները պետք է ձեռնարկեին ազգաբնակչության մարդահամարի անցկացում: Այն թույլ կտար յուրաքանչյուր սեկտորում ճշտել «տարբեր դավանաազներին, ազգություններին և լեզուների ճշգրիտ հարաբերակցությունը»:<sup>47</sup> Մինչև վիլայեթների բյուջեի հաստատումը Վալին պարտավոր էր խորհրդակցել գլխավոր տեսուչի հետ, որը վիլայեթների ազգաբնակչության և հասարակության միջև տարաձայնությունների դեպքում պետք է հանդես գար արբիտրի, «համիդիների» զորամասերը պահեստի հեծելագործի վերածելը վերահսկողի և դրանց գործունեությունն արգելողի դերում:<sup>48</sup>

«Գլխավոր տեսուչների համար հրահանգների նախագիծն» ուներ լավատեսական ուղղվածություն: Այն բխում էր 1914թ. հունվարի 26-ի համաձայնագրի կենսագործման նկատմամբ համոզվածությունից, գլխավոր տեսուչների օբյեկտիվ, անկանխակալ գործունեության և Տաճկահայաստանի ապագայի հանդեպ հավատից: Արևմտահայաստանի սեկտորների ղեկավարներին թելադրվում էր գործունեության որոշակի կարգ. պաշտոններում հաստատում, իշխանության մարմինների գործունեության կանոնակարգում, վարչական սահմանների որոշում, ազգաբնակչության կազմի ճշտում: Գլխավոր տեսուչի առյաճը դիտվում էր որպես Տաճկահայաստանում քարենդրոզումների երաշխավոր, միջնորդ սուլթանական և նահանգային իշխանությունների միջև, հասարակական անդորրի պահապան: Տեսուչների վրա դրված բոլոր պարտականությունների կատարումը հնարավորություն կտար ապահովել պատվի, գույքի և հասարակական զարգացման հայկական ակնկալիքները: Կանխվեց երիտթուրքերի վարչակարգի կողմից «Հրահանգների նախագծի» հակամեկնաբանման հնարավորությունը:

Կոտաանդնուպոլսի պատրիարք Չավենը դրական դիրք գրավեց ձեռք բերված ռուս-թուրքական համաձայնագրի նկատմամբ, որի իրագործումը և խորացումը հնարավոր կդառնային միայն Ռուսաստանի աջակցության դեպքում: 1914թ. փետրվարի 26-ին Ռուսաստանի դեսպանատանը կայացավ պատրիարքի և «Դաշնակցություն» կուսակցության ներկայացուցիչ դոկտոր Հակոբ Չավրիյանի հանդիպումը Ռուսաստանի դեսպան Գիրսի հետ: Պատրիարք Չավենը երախտագիտություն հայտնեց Ռուսաստանին հայոց շահերի պաշտպանության և ձեռք բերված հաջողությունների համար, որոնք պետք էր օգտագործել խելամտորեն: Հանձնվեց «Գլխավոր տեսուչների համար հրահանգների նախագիծը»: Ռուսական դեսպանը քավակնություն հայտնեց հայկական սթափ դիրքորոշման նկատմամբ. «Հայերը ճիշտ վարվեցին պատշաճը մատուցելով քարեփոխումներին և դրանցում գտնելով արժեքավոր տարրեր»:<sup>49</sup> Ընդգծվեցին քարեփոխումների վերաբերյալ համաձայնագրի ձեռքբերման գործում ռուսական դիվանագիտության հսկայական ջանքերը և այդ ոլորտում Ռուսաստանի կառավարության կողմից խնամակալությունը շարունակելու պատրաստակամու-

քյունը: Այդ ուղղությամբ որպես «առաջին ակտ» նշվեց հունվարի 26-ի համաձայնագիրը: Դեպքերի հետագա ընթացքը կախված էր լինելու Ռուսաստանի և հայերի սերտ համագործակցությունից: Ցանկություն էր հայտնվում ձեռնարկատիրության, հողային հարցի կարգավորման, ամևտրի և արհեստների զարգացման ճանապարհով Տաճկահայաստանի վերածննդի համար ներգրավել ռուսահայերի նյութական միջոցները: Ընդ որում, որպես բարենորոգումները կյանքի կոչելու երկրորդ փուլ ներկայացվող հայկական գործունեությունը պետք է կայունացներ թուրքերի վարքագիծը և ապահովեր առաջատար երկրների աջակցությունը: Հայկական կողմը ցանկություն հայտնեց տեսուչներ նշանակել թուրքական կողմից կախում չունեցող եվրոպական փոքր երկրներից, որին Գլխոր մոտեցավ ըմբռնումով: Հանդիպման ավարտը հանդիսացավ Տաճկահայաստանի բարենորոգումների ռուս-թուրքական համաձայնագրի ստորագրման վերաբերյալ ցարի դրական վերաբերմունքի մասին ռուսական դեսպանի տեղեկությունը:<sup>56</sup>

1914թ. հունվարի 26-ի համաձայնագիրը ազդեցություն գործեց նաև թուրքական հասարակական կարծիքի վրա: Ազգայնամուլներն այն միանշանակորեն դատապարտեցին, որպես քրիստոնյաներին պաշտպանելով Թուրքիայի ներքին գործերին Եվրոպայի «անարդարացի միջամտություն»: Տարակուսանք էր հայտնվում սուլթանական կառավարության «ստոնասրտության» և մի շարք վիլայեթներում հայերի ու մահմեդականների «հավասար ներկայացուցչություն» թույլ տալու կապակցությամբ: Դրանում վտանգ էր դիտարկվում թուրք ազգի կենսական շահերի նկատմամբ: Չափավոր գործիչներն անբավականություն էին հայտնում հայկական սեկտորների գլխավոր տեսուչներին տրված լայն լիազորությունների վերաբերյալ:<sup>57</sup> Երիտթուրքերը մարտավարական նկատառումներով Կոստանդնուպոլսի պատրիարքի հետ համաձայնագիր կնքեցին նոր խորհրդարանում հայերին 16 պատգամավորական տեղ հատկացնելու մասին: Երկուական պատգամավորներ էին նախատեսվում Կոստանդնուպոլսի, Վանի, Էրզրումի և Բիթլիսի հայերից, մնացածները պետք է ներկայացնեին Հալեպի, Մերաստիայի, Իզմիրի, Կեսարիայի, Դիարբեքրի, Կոզանի և Մարաշի ընտրողներին:<sup>58</sup> Երիտթուրքերն սկսեցին ռազմավարական նկատառումներով հապշտապ զբաղեցնել ծառայողների պաշտոնները: Որպես պաշտոնյաներ նշանակվում էին մահմեդական ազգաբնակչության ներկայացուցիչները: Փոքրաթիվ հայ ծառայողները ազատվում կամ տեղափոխվում էին տերության ծայրամասերը: Ուժեղացավ մահմեդական փախստականների հոսքը մասնավորապես Մակեդոնիայից Մերաստիա:<sup>59</sup>

Միաժամանակ գերմանա-թուրքական ծայրահեղ ազգայնամուլական շրջանակները մշակում էին Տաճկահայաստանից, իբրև Ռուսաստանի հետ ապագա ռազմական գործողությունների թատերաբեմից, հայերի «տեղահանության» ծրագիրը: Գերմանիայի արտաքին քաղաքականության գերատեսչության ծառայող Պաուլ Ռորբախը 1913թ. նոյեմբերի 23-ին «Գերմանիա-Ասիական ընկերության» նիստում հանդես եկավ «Թուրքիայում Գերմանիայի խնդիրները» զեկուցմամբ: Ընկերության նախագահն էր Թուրքական ռազմական ուժերի նախկին գլխավոր տեսուչ Ֆելքմարշալ Ֆոն դեր Հուլը, իսկ մասնակիցներն էին գերմանական գլխավոր շտաբի ներկայացուցիչները: Չեկուցման հիմնական զաղափարը Օսմանյան Թուրքիայի ամբողջականության պահպանության համար Արևմտյան Հա-

յառտանի կարգավիճակի անփոփոխ թողնելն էր: Խնդրի լուծում էր դիտվում Թուրքիայի հայ ազգաբնակչությունը Միջագետք տեղահանելը: Նախատեսվում էր նրանց բնակեցնել Բաղդադի երկաթուղագծի շրջակա անապատային տարածքներում, իսկ մի մասին էլ կոտորել քրդերի օգնությամբ. «Հայաստանը, - ասում էր Ռոբբախը, - ամենավտանգավոր և զրեթե միակ օջախն է, որտեղ կարող են բռնկվել ներքին լուրջ անկարգություններ, ընդ որում, կրակը կտարածվի նաև թուրքական կայսրության, այդ իմաստով, թեկուզև ավելի պակաս վտանգավոր տարածքներ: Այդ պատճառով Հայաստանում հանգառության գոյությունը պետք է դառնա թուրքական կառավարության ամենակարևոր խնդիրներից մեկը: Հետևաբար, դա հանդիսանում է նաև մեր՝ գերմանական քաղաքականությունը»: Հայերի եղեռնն առաջարկվում էր բարձրացնել պետական քաղաքականության աստիճանի. «Հայերի ոչնչացումը երկրամասում հանգառության հաստատման միջոցներից մեկն է»:<sup>54</sup> Տեղահանության այդ նույն ծրագիրը քննարկվեց Բեռլինում, 1914թ. գերմանա-թուրքական կոմիտեի նիստում:<sup>55</sup>

...Լարվածություն էր պահպանվում Էրզրումի վիլայեթում: Ըստ դեսպան Գիրսին՝ գլխավոր հյուպատոս Ադամովի 1914թ. մարտի 15-ի գեկուցագրի, ազգային հողի վրա այդտեղ պարբերաբար տեղի էին ունենում բախումներ. «Էրզրումում երիտթուրքերի կամ, ավելի ճիշտ, իթթիհատական ակումբի կողմից հայերի դեմ հրահրումները բնավ էլ չեն հանդարտվել, ու թեև դա արդեն չի սպառնում անհապաղ կոտորածով, ինչպես եղավ ընթացիկ տարվա հունվարի սկզբին, այնուամենայնիվ, ժամանակ առ ժամանակ արտահայտվում է հայերի և մահմեդականների միջև զինված բախումների ձևով»: Մտեղծված պայմաններում Էրզրումի թեմի առաջնորդ եպիսկոպոս Մմբատ Մահադետյանն ստիպված էր վիլայեթի վալիին բողոք ներկայացնել մահմեդականների դեմ: Չսպասելով ժամդարմերիայի հետաքննության արդյունքներին, վիլայեթի ղեկավարը հայերին մեղադրեց բոլոր մահացու մեղքերի մեջ: Եպիսկոպոսին հանձնվեց վալիի բացասական պատասխանը. հայերը «միայն մտածում են այն մասին, որ հրահրվեն անկարգություններ՝ ամբողջ մեղքը զցելով մահմեդականների վրա»:<sup>56</sup> Զգտելով տեղական մահմեդական ազգաբնակչությանը հրահրել հայերի դեմ՝ երիտթուրքերի կուսակցության գործակալները լծվեցին զանգվածային հիստերիայի ուռճացմանը: Սկսեցին խաղարկվել կենցաղային հողի և ազգամիջյան հարաբերությունների վրա սարքված վեճերը:

...Կովկասի փոխարքայից ստանալով Արևմտյան Հայաստանում բարենորոգումների վերաբերյալ ռուս-թուրքական համաձայնության տեղեկությունը, Ամենայն Հայոց կաթողիկոսն անհրաժեշտ համարեց Ռուսաստանի ղեկավարությանն հայտնել իր երախտագիտությունը: Կաթողիկոսի 1914թ. ապրիլի 16-ի՝ Արտաքին գործերի նախարար Մազունովին հղած ուղեբժում խոսվում էր Թուրքիայի հայ ազգաբնակչությանը Ռուսաստանի ազնվաբարո աջակցության մասին. «Այժմ, երբ Չերո Բարձր Գերագանցության իմաստուն ղեկավարության ներքո ռուսական դիվանագիտությունն իր վրա է վերցրել Տաճկահայաստանում բարենորոգումների ծրագրի մշակման և կիրառման ակտիվ նախաձեռնությունը, իմ հոտը և ես համոզված եմ դրանում, կարող է հանգիստ ձեռնամուխ լինել դարավոր հալածանքներով խախտված իր հոգևոր-մշակութային ուժերի վերականգմանը և վստահորեն նայել ապագային, չվախենալով սովորական խոչընդոտներից, որոնք կարող են Չերո Բարձր Գերագանցության կողմից մշակված

ծրագրի քարենդորդումների հիմքերի ամրապնդման և Տաճկահայաստանի կյանքում անշեղորեն իրականացման հետագա ձեռնարկուներին ընդդեմ ձեռնարկվել Օտոմանյան կառավարության կողմից:<sup>57</sup> Հույս էր հայտնվում, որ 1914թ. հունվարի 26-ի համաձայնագրի արմատները քարի ծիլեր կարձակեն:<sup>58</sup>

1914թ. ապրիլի 26 – մայիսի 8-ին Կոստանդնուպոլսի պատրիարք Չավենն ընդունեց Թուրքիայի հայկական սեկտորների գլխավոր տեսուչների թեկնածուներ հռլանդացի Վեստենենկին և նորվեգացի Հոֆին; Առաջինը հռլանդական գաղութներում վարել էր վարչական տարրեր պաշտոններ, իսկ երկրորդը, լինելով մայոր, չունեք վարչական գործունեության փորձ: Հանդիպումը հայկական շրջանակներում աշխույժ արձագանքներ առաջացրեց և հավատ ներշնչեց 1914թ. հունվարի 26-ի համաձայնագրի հաջողության նկատմամբ: Արքեպիսկոպոս Չավենը դրական տպավորություն ստացավ թեկնածուներից, թեև նրանք գտնվում էին վարչական գործունեության տարրեր մակարդակներում: Պատրիարքի կարծիքով դոկտոր Չավրիյանը կարողացել էր հաջողությամբ կատարել թեկնածուներ ընտրելու հանձնարարությունը:<sup>59</sup>

1914թ. մայիսի 1-6-ը տեղի ունեցավ Չավրիյանի հանդիպումը Ռուսաստանի հավատարմատարի հետ: Չրույցի սկզբում շոշափվեց գլխավոր տեսուչների հարցը: Հավատարմատարին հայտնվեց, որ Վեստենենկը և Հոֆը պաշտոնների ստանձնման գործում աջակցության համար երախտագիտություն են հայտնել Կոստանդնուպոլսի պատրիարքին: Փոխանցվեցին գլխավոր տեսուչների տրամադրվածություններն այն մասին, «որ Հայաստան գալով, նրանք սկսեցին այն համարել իրենց երկիրը, որ որոշել են նրա համար աշխատել, եթե նույնիսկ իրենց կյանքն արժենա, քանզի նրանք հասցրել են այստեղ շատ բան լսել, թե ինչպես են Թուրքիայում հաշվեհարդար տեսնում իրենց քաղաքական թշնամիների հետ:<sup>60</sup> Հաղորդվեց թեկնածու Վեստենենկի վերաբերյալ պատրիարք Չավենի քարձր գնահատականը: Հավատարմատար Գուլկևիչը տեսուչների կացությունը համարելով դժվարին. «Նրանք մենակ մնացին թուրքերի դիմաց», - թերահավատություն հայտնեց դեպի Գերմանիան հակված Հոֆի նկատմամբ: Հայկական կողմին, որպեսզի չհարուցեն թուրքերի կասկածամտությունը, խորհուրդ տվեց քիչ շփվել գլխավոր տեսուչների հետ: Այդ կապակցությամբ մերժվում էր ռուսական միջամտությունը: Գուլկևիչը հայտարարեց. «Մենք գտնում ենք, որ պետք է թուրքերին և գլխավոր տեսուչներին թողնել դեպ առ դեմ: Մեր միջամտությունը կարող է միայն արթնացնել թուրքերի կասկածամտությունը»: Հերքվեց Չավրիյանի այն կարծիքը, թե Ռուսաստանը փոխել է Թուրքիայի հայ ազգաբնակչության բախտի նկատմամբ իր վերաբերմունքը. «Հայկական հարցում ռուսները չեն փոխել իրենց մոտեցումները և կարող են փոխել միայն իրենց գործելակերպը: Ռուսաստանը նախկինում քարենդորդումների էր հասնում Թուրքիայի նկատմամբ ճնշումներով, այժմ նա թերևս ստիպված կլինի անցնել ավելի խաղաղ ազդեցության, ձգտելով անհրաժեշտին հասնել քարեկամական հարաբերությունների միջոցով:<sup>61</sup>

1914թ. մայիսի 10(23)-ին դեսպան Գիլսը Մազոնովին տեղեկացրեց, որ Վեստենենկն ու Հոֆը, թեև հունվարի 26-ի «Համաձայնագրի» հիման վրա, սակայն իրենց ընդհանուր իրավունքները սահմանափակող պայմանագրեր կնքեցին Թուրքիայի ներքին գործերի նախարար Թալեաթ

փաշայի հետ: Նրանք եվրոպական վերահսկիչներից վերածվեցին արտգործմախարարության ղեկավարությանը ենթարկվող թուրքական աստիճանավորների, որոնք պարտավոր էին գործել երիտթուրքերի նախանշած ճանապարհով: Եթե ըստ հունվարյան համաձայնագրի գլխավոր տեսուչները գործնականում չէին կարող պաշտոնանկ անել վիլայեթների վալիներին, ապա այժմ այդ դրույթը տարածվում էր գավառների ղեկավարության մի շարք պաշտոնների և գերատեսչությունների տեսուչների վրա: Բարձրաստիճան պաշտոնյաների կատեգորիայի մեջ երիտթուրքերը մտցրել էին նաև քննիչներին, դպրոցների ուսուցիչներին, վիլայեթների քարգմանիչներին, դպրոցների տեսուչներին: Վեստենենկին և Հոֆին միայն արտակարգ դեպքերում էր իրավունք տրվում «ժամանակավորապես» հեռացնել դատավորներին, սակայն նույնիսկ այդ դեպքում էլ էր պահանջվում արդարադատության նախարարության սանկցիան: Գլխավոր տեսուչներին պաշտոնից ազատելու դեպքում նրանց համար նախատեսվում էր վճար՝ վեցամսյա աշխատավարձի չափով: Երիտթուրքական դիվանագիտությունը ռուսական դիվանագիտությանը, բողոքելով գլխավոր տեսուչների անզիջողականության, իսկ գերմանացիներին՝ «ռուսական քանսարկություններին» մասին, կարողացավ անցկացնել իր գիծը և ապահովել օսմանյան պաշտոնյաների նրանց վերածումը:<sup>62</sup>

Հաստատվեցին Կոստանդնուպոլսի պատրիարք Չավենի կասկածները, որ երիտթուրքերը, հանուն իրենց գերիշխանության, պատրաստ են գործարքել «ցանկացած մեքենայություն»:<sup>63</sup> Ճնշման առարկա հանդիսացան գլխավոր տեսուչները, որոնց դերի ձևափոխմանը նպաստեց Գերմանիայի դեսպան Վանգենհեյմը: Համաձայնագրերի կնքման հաջորդ օրը նա արտաքին գործերի նախարարին զեկուցեց. «Հոֆի վրա երկարատև ճնշման արդյունքում ես վերջապես հասա այն քանին, որ ոչ միայն նա, այլև Վեստենենկը հրաժարվեցին իրենց չափազանց մեծ պահանջներից ու կասկածներից: Երեկ կնքվեցին համաձայնագրերը: Երկու պարոնայք մեկնում են իրենց հայրենիքները, սակայն պետք է իրենց պաշտոններն ստանձնեն ոչ ուշ, քան այս տարվա հուլիսի 5-ը»:<sup>64</sup>

1914թ. մայիսի 17-ին Կոստանդնուպոլսի պատրիարք Չավենին հաջողվեց ստանալ թուրքական կառավարության կողմից գլխավոր տեսուչների տոռագրած համաձայնագրերի պատճենները: Համոզվելով խոստումների թուրքական քաղաքականության անփոփոխության մեջ, Կոստանդնուպոլսի պատրիարքը ուշադրություն դարձրեց գլխավոր տեսուչներին կից հայ փորձառու խորհրդականների առկայության անհրաժեշտության վրա: Երիտթուրքերի վարչակարգի խոստումների հեթոքական անիրագործելիությունը ցույց տվեցին Թուրքիայի պառլամենտի մայիսյան ընտրությունները, երբ խախտելով Կոստանդնուպոլսի պատրիարքի հետ համաձայնագիրը, պայմանավորված 16 պատգամավորական տեղի փոխարեն հայ ազգաբնակչությանը հատկացվեց 13 տեղ: Ընդ որում, «ազգային շահերի արտահայտիչները» լիովին բավարարում էին երիտթուրքական վարչակարգին, որը կարողացել էր պառլամենտ անցկացնել իր դրածոներին:<sup>65</sup>

Հայկական կողմին անհանգստացրեց բարենորոգումների իրագործման հանդեպ ռուսական ու գերմանական դիվանագիտության «անտարբերությունը» և թուրքական իշխանությունների ընդհանուր դիրքորոշումը: Մկավեցին բարձրաստիճան երիտթուրքերի հետ գլխավոր տեսուչներ-

րի քրիստոնյա չորս խորհրդականների փոխարինման վերաբերյալ քանակցությունները: Թեկնածուների մեջ նշված էր նաև թուրքական պատլամետախի նախկին անդամ Արմեն Գարոն: Բանակցությունների ընթացքում ներքին գործերի նախարար Թալեաթ փաշան պաշտպանում էր քրիստոնյա երկու խորհրդականի գաղափարը, այն դեպքում, երբ Հոֆը նրանց թվի կրճատումը թույլ էր տալիս մինչև երեքը: Փաստորեն խոսքը վերաբերվում էր խորհրդականների թվից Գարոյին հեռացնելուն, որն առանձնաձևում էր կառավարման իրազեկությամբ և Հայկական հարցի իմացությամբ: Հայկական և թուրքական կողմերի միջև փոխհամաձայնության կայացման համար 1914թ. հունիսի 30-ին Թալեաթ փաշայի հետ հանդիպման հրավիրվեցին դաշնակցական գործիչներ Գարոն և Վռամյանը: Չրույցի ընթացքում ներքին գործերի նախարարը խոստովանեց որոշումներում հայերին հետաքրքրող հողային, դպրոցական, եկեղեցական, ծառայողական հարցերում առաջընթացի քաջակայումը: Նմանօրինակ իրավիճակի մեղավորության պատասխանատվությունը դրվեց հայերի վրա, որոնք քարենորոգումների իրականացման համար փոխանակ փոխհամաձայնության գնային երիտթուրքերի հետ, դիմում էին մեծ տերություններին: Գարոյին, որպես գլխավոր տեսուչ Հոֆին խորհրդական նշանակելու մերժումը Թալեաթը քաջատրեց այն քանով, որ նա կդառնար «իրական տեսուչը»: Որոշվեց յուրաքանչյուր տեսուչին կից նշանակել չորս՝ երկու մահմեդական և երկու հայ խորհրդական:

Ժամը 20-23-ը ձգված գրույցը օգտակար հանդիսացավ կողմերի տեսակետներում տարաձայնությունների ըմբռնման համար: Հայոց ներկայացուցիչները գտնում էին, որ երիտթուրքերը զբաղվում են «նապոլեականությանը և քիսմարկությանը», իսկ իրենց մեղադրում են արտաքին ուժերի հետ գործակցության մեջ: Որպես անիրագործելիի՝ մերժվեցին մի նոր Բիսմարկի դեր կատարելու Թալեաթի նկրտումները: Նշվեց զարգացման ավելի քարձր աստիճանի վրա կանգնած օտար ազգերին իրենց ձուլելու թուրքերի անկարողությունը: 500-600 տարվա ընթացքում Հայկական լեռնաշխարհի թափանցած թուրքական քաղաքակրթությունը արժևորվեց որպես ոչ հիմնական: Գարոյի խոսքերով, Արևմտահայաստանի երեք վիլայեթներով 1913թ. ճամփորդության ընթացքում ինքն ընդամենը երեք կամուրջ է հայտնաբերել, որոնցից երկուսը կառուցված են եղել հայերի կողմից, իսկ մեկը՝ դեռևս Լեռն Թեմուրի ժամանակ: Փոխըմբռնման երիտթուրքական խոստումները համարվեցին խաբուսիկ, որոնց նպատակն է թաքցնել «Հայաստանն առանց հայերի» նրանց ծրագրի իրագործումը: Պանթուրքիզմը համարվեց Օսմանյան տերությունը դեպի կործանում տանող սխալ քաղաքականություն, որի փլատակներում կարող է տուժել նաև հայ ժողովուրդը: Թալեաթը բանավեճն ընդհատեց ժամանակը չբավարարելու պատճառաբանությամբ:<sup>66</sup>

Տեղի ունեցած քանավեճին տեղյակ էր Կոստանդնուպոլսի պատրիարք Չավենը, որը անվտանգության հանձնաժողովի վորոշմամբ ներքին գործերի նախարարին երկու անգամ խնդրել էր քրիստոնյա խորհրդականներ նշանակել հայ ազգին ճանաչող և կառավարման գործից տեղյակ անձանցից:<sup>67</sup> 1914թ. հունիսին պատրիարք Չավենը հրաժարական տվեց, որի ձևական պատճառը հանդիսացավ հայ էմիգրանտներից խլված հողերը նրանց վերադարձնելու երիտթուրքերի մերժումը: Դրան նպաստեց նաև դեռևս Արդուլ Համիդի վարչակարգի ժամանակ բռնազրաված եկեղեցա-

կան կալվածքների լուծում չտացած խնդիրը: Երիտթուրքերը Առստանդնուպոլսի պատրիարքի պահանջների բավարարման խոչընդոտ էին մատնանշում շարիաթի դրույթները: Առստանդնուպոլսի պատրիարքի դերի նվազեցման նպատակով երիտթուրքերը հայկական համայնքներից պահանջեցին բոլոր հարցերով, շրջանցելով պատրիարքին, դիմել կառավարությանը: Երիտթուրքերը միաժամանակ պատրիարք Չավենին առաջարկեցին ետ վերցնել հրաժարականը:<sup>68</sup> 1914թ. հուլիսի 2-ին Հոֆը քարտուղարների հետ միասին հրաժեշտի տեսակցության համար ժամանեց Առստանդնուպոլսի պատրիարքարան: Մի քանի օր անց նա մեկնեց ծառայատեղի՝ Բ սեկտոր, իսկ Վեստենենկը, Առստանդնուպոլսում մնալով ևս մեկ շաբաթ, ծառայության մեկնեց Ա սեկտոր:<sup>69</sup>

Մկրված համաշխարհային պատերազմը երիտթուրքերի կառավարությանն ստիպեց հստակեցնել իր դիրքորոշումը: 1914թ. հուլիսի 24-ից օգոստոսի 2-ը կայացավ ընդդեմ Անտանտի Գերմանիայի հետ զաղտնի դաշինքի ստորագրումը, որին հաջորդ օրը միացավ Ավստրո-Հունգարիան:

Նույն օրը Լեթ որոշում ընդունվեց լուծարել Տաճկահայաստանի սեկտորների համար նախատեսված օտարերկրացի տեսուչների պաշտոնները, որ նշանակում էր հունվարի 26-ի համաձայնության վերացում:<sup>70</sup>

Այսպիսով 1914թ. հունվարի 26-ի համաձայնագիրը հանդիսացավ սեփական շահերը հետապնդող Ռուսաստանի և Գերմանիայի ճնշմանը տեղի տված երիտթուրքական փորձակարգի ժամանակավոր զիջումը: Ընդ որում, Բեռլինը մշակեց Ռուսաստանի հետ Թուրքիայի պատերազմի դեպքում հայ ժողովրդի տեղահանության այլընտրանքային պլան: Իսկ Ամենայն Հայոց կաթողիկոսի և Առստանդնուպոլսի պատրիարքարանի բոլոր ջանքերն ուղղված էին ռուս-թուրքական համաձայնագրի կատարմանը, հայ ազգարնակչության անվտանգության ապահովմանը, իրական բարենորոգումների իրագործմանը:

### ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

<sup>1</sup> Геноцид армян в Османской империи. Под ред. М. Г. Нерсисяна, 2 изд., Ер, 1983, N 100, с. 202.

<sup>2</sup> Там же, N 107, с. 227, 228.

<sup>3</sup> Там же, N108, с. 228-230.

<sup>4</sup> Туян В. Г. Армянский вопрос в русской печати 1900-1917, Ер., 2000, с. 98, 99.

<sup>5</sup> Геноцид армян..., N 110, с. 232, 233.

<sup>6</sup> Письма И. И. Воронцова-Дашкова Николаю Раманову. – Красный Архив. 1928, т. 26, с.119.

<sup>7</sup> Геноцид армян ..., N 111, с. 233, 234.

<sup>8</sup> Письма И. И. Воронцова-Дашкова ..., с. 119.

<sup>9</sup> Там же, с. 118-119.

<sup>10</sup> Архив внешней политики России (АВПР), ф. Отчеты МИД, 1912, л. 148; Государственный архив Российской Федерации (ГАРФ), ф. 230, оп. 1, л. 128, л. 12-14.

<sup>11</sup> Հազյան Գ. Հայաստանը և Հայ Դաշինք, Եր., 1991, էջ 154,155:

<sup>12</sup> Сборник дипломатических документов. Реформы в Армении 26 ноября 1912г. –10 мая 1914г. Петроград, 1915, N 1, с. 4.

<sup>13</sup> Հազյան Գ. Հայաստանը..., էջ 155,156:

<sup>14</sup> Сборник дипломатических документов..., N 2, с. 5, 6.

- <sup>15</sup> Там же, с. 6.
- <sup>16</sup> Там же, N 3, с. 7.
- <sup>17</sup> Հայաստանի հանրապետության պետական կենտրոնական պատմական արխիվ (այսուհետև՝ ՀՀ ՊԿՊԱ), ֆ. 57, ց. 5, գ. 26, ք. 6:
- <sup>18</sup> Նույն տեղում, ք. 8, հ., 9:
- <sup>19</sup> Նույն տեղում, ք. 9:
- <sup>20</sup> Նույն տեղում, ք. 12-14:
- <sup>21</sup> Լազյան Գ. Հայաստան..., էջ 157-159:
- <sup>22</sup> Туяян В. Г. Россия и Армянский вопрос, Ер., 1988, с. 190,191.
- <sup>23</sup> АВИР, ф. Отчеты МИД, 1912, л. 161.
- <sup>24</sup> ГАРФ, ф. 730, оп. 1, л. 257, л. 12.
- <sup>25</sup> Հայկական հարցի արժարժուճը 1912 թվականին. Մ. Գ. Ներսիսյան. - Պատմության կենտրոնները, Երևան, 1998, էջ 252-255:
- <sup>26</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 26, ք. 26 հ.:
- <sup>27</sup> Նույն տեղում, ք. 25, 26 հ.:
- <sup>28</sup> Նույն տեղում, ֆ. 113, ց. 3, գ. 1172, ք. 5 հ- 8:
- <sup>29</sup> Геноцид армян..., N 121, с. 255.
- <sup>30</sup> Там же, N 122, с. 256.
- <sup>31</sup> АВИР, ф. Политархив, л. 3471, 1913, л. 12.
- <sup>32</sup> Геноцид армян..., N 123, с. 256-258.
- <sup>33</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 56, ք. 13-15:
- <sup>34</sup> Հայաստանը միջազգային դիվանագիտական և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում: կազմ. Չ. Ա. Կիրակոսյան, Ռ. Գ. Սահակյան, Եր., 1972, նք. 33, էջ 185, նք. 38, էջ 193-197:
- <sup>35</sup> Նույն տեղում, էջ 209-219:
- <sup>36</sup> ГАРФ, ф. 730, оп. 1, л. 257, л. 2-3.
- <sup>37</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 4, գ. 52, ք. 10:
- <sup>38</sup> Նույն տեղում, ք. 10 հ.:
- <sup>39</sup> Հայաստանը..., նք 188, էջ 339-342:
- <sup>40</sup> Будущее устройство Армении. Пг., 1915, N 28, с. 79, 87.
- <sup>41</sup> Там же, с. 87.
- <sup>42</sup> АВИР, ф. Политический архив, л. 3465, 1914, л. 126.
- <sup>43</sup> Там же, л. 127.
- <sup>44</sup> Там же, л. 3460, 1913, л. 181.
- <sup>45</sup> Там же, л. 3465, 1914, л. 138.
- <sup>46</sup> РГВИА, ф. 1, оп. 48, л. 35456, л. 18.
- <sup>47</sup> Там же, л. 22.
- <sup>48</sup> Там же, л. 18-24.
- <sup>49</sup> Там же, л. 34682, л. 79.
- <sup>50</sup> Там же, л. 77-85.
- <sup>51</sup> Հայաստանը..., նք 201, էջ 364:
- <sup>52</sup> Акопян С.М. Западная Армения в планах империалистических держав. Ер., 1967, с. 41:
- <sup>53</sup> РГВИА, ф. 1, оп. 48, л. 34782, л. 89-94.
- <sup>54</sup> Акопян С. М. Западная Армения..., с. 41.
- <sup>55</sup> Պալական Գ. Հայ գործընթաց, Եր., 1991, էջ 38:
- <sup>56</sup> Геноцид армян..., N 269, с. 269, 270.
- <sup>57</sup> Сборник дипломатических..., N 158, с. 179.
- <sup>58</sup> Там же, с. 178-780.
- <sup>59</sup> Չավեն արքեպիսկոպոս. Պատրիարքական հուշերս, Կահիրե, 1947, էջ 38-41:
- <sup>60</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 28, ք. 110:
- <sup>61</sup> Նույն տեղում, ք. 114:
- <sup>62</sup> РГВИА, ф. 1, оп. 48, л. 34782, л. 97-99.

- <sup>63</sup> Չափեն արքեպիսկոպոս. Պատրիարքական..., էջ 39:  
<sup>64</sup> РГВИА, ф. 1, оп. 48, д. 34782, л. 105.  
<sup>65</sup> Չափեն արքեպիսկոպոս. Պատրիարքական..., էջ 37:  
<sup>66</sup> Գալստ Լ. Մարտի օրեր: Բոստոն, 1948թ. էջ 196-199:  
<sup>67</sup> Չափեն արքեպիսկոպոս. Պատրիարքական..., էջ 41:  
<sup>68</sup> Турция. – Русское Слово. 1914, 25 июня.  
<sup>69</sup> Չափեն արքեպիսկոպոս. Պատրիարքական..., էջ 41: Константинополь Русское Слово. 1914, 22 августа.  
<sup>70</sup> Турция. – Русское Слово. 1914, 24 августа.

## Резюме

Обострение Армянского вопроса в канун Первой мировой войны и Армянская церковь.

Миквэл Минасян

Балканский кризис в международных отношениях 1912г. побудил Константинопольский патриархат выступить с инициативой в пользу улучшения положения турецкоподданных армян. Инициатива была поддержана верховным католикосом Геворгом V и русской дипломатией. Благодаря давлению Петербургского двора армянский вопрос вновь вошел в международную повестку великих держав. В ходе этого процесса верховный католикос поддерживал контакты с представителями различных кругов армянского общества, проявляя заинтересованность и сдержанность при обсуждении программы преобразований между Россией и Германией. О происходящих переговорах имел сведения Константинопольский патриархат. Акт 26 января 1914г. явился временной уступкой младотурецкого режима давлению России и Германии, которые оставляли собственные интересы. Все усилия верховного католикоса и Константинопольского патриархата были направлены на реализацию соглашения, осуществление безопасности жизни армянского населения, достижения реальных преобразований. Первая мировая война позволила младотуркам осуществить срыв намеченных реформ.

## Summary

Aggravation of the Armenian Question on the I World War Eve and the Armenian Church

Mikayel Minasyan

Balkan crisis in international relationship in 1912 induced the patriarchy of Constantinople to stand for improvement of Turkish subject Armenians' position. The supreme catholic Gevorg the V and Russian diplomacy supported this initiative. Owing to Petersburg court the Armenian Question was again included in the agenda of the Great Powers. In the course of this process the supreme catholic maintained contacts with representatives of different circles of Armenian society, showing interest and restraint while discussing programs of transformation between Russia and Germany. The patriarchy of Constantinople was informed about existing negotiations. Act of January 26, 1914 became a temporary concession of Young Turks regime to pressure of Russia and Germany, which stood for their own interests. All forces of the supreme catholic and the patriarchy of Constantinople were focused on realization of agreement, implementation of safety of Armenian society and achievement of real transformations. The I World War permitted the Young Turks to realize breakdown of planned reforms.